Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2025 թ.դեկտեմբերի 22-ի նիստում
Արձանագրություն N°01-12/25
Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր՝

Մ.Գ.Բարսեղյան

ԿԱՐԳ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳԻՏԱՀԵՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) կողմից գիտահեն մագիստրոսական թեզերի համար դրամաշնորհների տրամադրման մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) նպատակը, ոլորտային ուղղությունները, մրցույթի ներկայացվող փաստաթղթերը, մրցույթի կազմակերպման ժամկետները և հաղթողներին որոշելու պայմանները:

2. Դրամաշնորհները տրամադրվում են ուսանողների գիտահետազոտական գործունեությունը խրախուսելու և նախագծային աշխատանքները գիտական հետազոտությունների հետ ինտեգրումը խթանելու նպատակով:

3. Մրցույթին կարող են ներկայացվել մագիստրոսական թեզերի այն թեմաները, որոնք հավանության են արժանացել ֆակուլտետների գիտական խորհուրդներում:

4. Մրցույթի կազմակերպումը, մրցույթին ներկայացված ավարտական աշխատանքների թեմաների քննարկումը և արդյունքների ամփոփումն իրականացնում է համալսարանի գիտատեխնիկական խորհուրդը:

5. Յուրաքանչյուր ուսումնական տարում տրամադրվում է մինչև հինգ դրամաշնորհ՝ հինգ հարյուր հազարական դրամի չափով, հետևյալ մասնագիտությունների շրջանակում.

1) Ճարտարապետություն,
2) Շինարարական ճարտարագիտություն,
3) Կառավարում,
4) Դիզայն,

5) Գեոմատիկա,
6) Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն),
7) Զբոսաշրջություն,
8) Շրջակա միջավայրի պահպանություն:

6. Տրամադրվող դրամաշնորհների թիվը և գումարի չափը կարող են փոփոխվել (ավելանալ կամ նվազել)՝ Համալսարանի տարեկան բյուջեում համապատասխան փոփոխություններ կատարելու պարագայում:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

7.Մրցույթի կազմակերպման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է Համալսարանի կայքում՝ հունիսի առաջին տասնօրյակում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի անցկացման պայմանները և ժամկետները:

8.Հայտարարությունը հրապարակելուց հետո մեկամսյա ժամկետում սույն կարգի 5-րդ կետում նշված մասնագիտությունների թողարկող ամբիոնները դասախոսների և ուսանողների համար հասանելի եղանակներով (Համալսարանի կայք, սոցիալական հարթակներ, հայտարարությունների տախտակ) հրապարակում են մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության վերաբերյալ հայտարարություն (հավելված 1) որտեղ նշվում են՝

1) թեմայի անվանումը,

2) հակիրճ տեղեկություններ թեմայի ղեկավարի (ղեկավարների) մասին (ազգանուն, անուն, հայրանուն, գիտական աստիճան և կոչում, մասնագիտական և գիտական ոլորտներում ցուցաբերած արդյունքները և այլն),

3) թեմաների և ղեկավարների ընտրության վերաբերյալ ուսանողների հայտերի ընդունման ժամկետները (ոչ ուշ, քան սեպտեմբերի 10-ը),

4) հակիրճ տեղեկություններ դրամաշնորհների մասին:

9. Մագիստրանտները մինչև սեպտեմբերի 15-ը ամբիոններին են ներկայացնում թեմաների ընտրության վերաբերյալ դիմումները՝ սույն կարգի 2-րդ հավելվածին համապատասխան:

10. Ամբիոնները մինչև սեպտեմբերի 25-ը քննարկում են ուսանողների ներկայացրած դիմումները և հավանություն արժանանալու պարագայում ամբիոնի նիստի արձանագրությունը ներկայացնում են համապատասխան ֆակուլտետի դեկանատ:

11.Մրցույթին ներկայացված թեմաները մինչև հոկտեմբերի 15-ը քննարկվում են ֆակուլտետների գիտական խորհուրդներում և հավանության արժանանալուց հետո ներկայացվում են Համալսարանի գիտատեխնիկական խորհրդին (յուրաքանչյուր մասնագիտության գծով ոչ ավելի, քան երեք թեմա):

12.Գիտատեխնիկական խորհրդին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) Ֆակուլտետի խորհրդի նիստի արձանագրությունը՝ ավարտական աշխատանքի թեման մրցույթին ներկայացնելու երաշխավորելու վերաբերյալ՝ նշելով մագիստրոսի (խմբային աշխատանքի դեպքում՝ մագիստրոսների) ազգանունը, անունը, հայրանունը, թեմայի անվանումը, ամբիոնը, ղեկավարի (գիտական խորհրդատուի) ազգանունը, անունը, հայրանունը, գիտական աստիճանը և կոչումը, տեղեկություններ հրապարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների մասին,

2)Թեմայի հակիրճ հիմնավորումը (սույն կարգի 3-րդ հավելվածի կառուցվածքին համապատասխան)՝ նշելով դրա արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտության մեթոդաբանությունը, գիտական բաղադրիչը, կիրառական նշանակությունը (3-4 էջի սահմաններում):

III. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13.Մրցույթի արդյունքներն ամփոփում է Համալսարանի գիտատեխնիկական խորհուրդը, որը մինչև նոյեմբերի 10-ը քննարկում է ներկայացված հայտերը և գնահատում դրանք՝ սույն կարգի 3-րդ հավելվածի բաղադրիչներին համապատասխան:

14. Գիտատեխնիկական խորհրդի անդամները գնահատումն իրականացնում են անհատական կարգով՝ յուրաքանչյուր բաղադրիչի համար մինչև 5 միավոր սանդղակով:

15.Գիտատեխնիկական խորհրդի անդամների նշանակած միավորների հիման վրա կազմվում է ավարտական թեզերի թեմաների գնահատման ամփոփիչ թերթիկ (հավելված 4):

16.Թեմաների ամփոփիչ գնահատականը ձևավորվում է՝ բոլոր գնահատականների գումարային արդյունքը բաժանելով խորհրդի անդամների (գնահատողների) թվին:

17.Մրցույթում հաղթող են ճանաչվում առավելագույն միավորներ ստացած 5 թեմաները, պայմանով, որ յուրաքանչյուր թեմայի ամփոփիչ միջին գնահատականը պակաս չլինի 16 միավորից, ընդ որում, սույն կարգի 5-րդ կետում նշված յուրաքանչյուր մասնագիտության գծով հաղթող կարող է ճանաչվել միայն մեկ թեմա:

18.Գնահատման արդյունքների հիման վրա խորհուրդը կազմում է արձանագրություն մրցույթում հաղթող ճանաչված թեմաների վերաբերյալ, որը հաստատվում է բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ (հավելված 5):

19.Արձանագրությունը ստորագրում են գիտատեխնիակական խորհրդի բոլոր անդամները:

20.Արձանագրությունը կազմելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացվում է Համալսարանի ռեկտորին և ուժի մեջ է մտնում ռեկտորի հրամանով հաստատվելուց հետո:

21.Հրամանն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում մագիստրանտների և նրանց ղեկավարների հետ կնքվող՝ հետազոտական աշխատանքներ իրականացնելու պայմանագրերի օրինակելի ձևերը ներկայացված են սույն կարգի 6-րդ և 7-րդ հավելվածներում:

IV.ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

22.Դրամաշնորհների գումարի բաշխումն իրականացվում է հետևյալ սկզբունքով՝

1) մագիստրանտը ստանում է դրամաշնորհի գումարի 60 տոկոսը,

2)թեմայի ղեկավարը ստանում է դրամաշնորհի գումարի 40 տոկոսը:

23.Դրամաշնորհի գումարը տրամադրվում է 3 փուլով.

1) առաջին փուլում՝ հասանելիք գումարի 20 տոկոսի չափով կանխավճար, թեմայի հաստատումից հետո մեկամսյա ժամկետում,

2)երկրորդ փուլում՝ հասանելիք գումարի 40 տոկոսի չափով, միջանկյ:ալ ատեստավորումից հետո մեկամսյա ժամկետում՝ մագիստրանտի հաշվետվության և ամբիոնի վարիչի զեկուցագրի հիման վրա,

3)հասանելիք գումարի մնացած 40 տոկոսը՝ ամփոփիչ ատեստավորումից հետո մեկամսյա ժամկետում:

24.Ամփոփիչ ատեստավորումից հետո տասնօրյա ժամկետում, համապատասխան ամբիոնների վարիչները գիտատեխնիկական խորհրդին են ներկայացնում.

1)տեղեկանք ատեստավորման արդյունքի (մագիստրանտի ավարտական աշխատանքի գնահատականի) վերաբերյալ՝ տրված համապատասխան ֆակուլտետի դեկանատի կողմից,

2)հրապարակված կամ հրապարակման ենթակա՝ սահմանված ձևաչափի գիտական հոդվածը, որը պետք է արտացոլի ավարտական թեզի հիմնական դրույթները՝ նշելով այն պարբերականը, որտեղ հրապարակվել կամ հրապարակվելու է հոդվածը:

25. Գիտատեխնիկական խորհուրդը սույն կարգի 24-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում կազմում է արձանագրություն դրամաշնորհային ծրագրի արդյունքների ամփոփման վերաբերյալ և ներկայացնում համալսարանի ռեկտորին:

26.Արձանագրությունը հիմք է հանդիսանում երրորդ փուլի նախատեսված գումարի վճարման համար:

27. Այն դեպքերում երբ մրցույթի ներկայացված թեման ամփոփիչ ատեստավորման արդյունքում ստացել է «բավարար» գնահատական (մինչև 13 միավոր) և կամ չի ներկայացվել անհրաժեշտ գիտական հոդվածը, գիտատեխնիկական խորհուրդը կարող է չերաշխավորել այդ թեմայի 3-րդ փուլի համար վճարումը: Բացի այդ, համապատասխան

ղեկավարը (գիտական խորհրդատուն) զրկվում է հետագա երեք տարում մրցույթին մասնակցելու իրավունքից:

V.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

28.Սույն կարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

29.Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից և հրապարակվում է Համալսարանի կայքում:

Գիտական քարտուղար Լ.Հ.Լևոնյան
22 դեկտեմբերի, 2025թ.
գիտխորհրդի որոշում N°01-12/25

Հավելված 1

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(Մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների համար)

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը հայտարարում է գիտահեն մագիստրոսական ավարտական աշխատանքների համար դրամաշնորհների տրամադրման մրցույթ

Մրցույթին ներկայացված լավագույն հինգ ավարտական աշխատանքների համար ուսանողներին և նրանց ղեկավարներներին կտրամադրվի 500 հազարական դրամ դրամաշնորհ:

Մրցույթին կարող են ներկայացվել ---------- ամբիոնի նիստում հավանության արժանացած նախագծա-հետազոտական աշխատանքների հետևյալ թեմաները

N⁰	Թեմայի անվանումը	Թեմայի ղեկավարի ա.ա.հ.	Թեմայի ղեկավարի գիտ.աստ.և կոչում
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
8			
10			
11			
12			
13			

Մագիստրատուրայի 1-ին կուրսի այն ուսանողները, ովքեր ցանկություն ունեն մասնակցելու մրցույթին, պետք է մինչև սեպտեմբերի 15-ը ղեկավարի հետ համաձայնեցված դիմումը (մրցույթին մասնակցելու հայտը) ներկայացնեն համապատասխան ամբիոն՝ դիմումին կցելով ընտրված թեմայի հիմնավորումը:

Հավելված 2

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգայի համալսարանի
----------Ֆակուլտետի
----------ամբիոնի վարիչ
----------ին
Մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող
----------ից
Դիմում

Ցանկանում եմ իմ ավարտական աշխատանքի ---------- թեմայով մասնակցել գիտահեն մագիստրոսական ավարտական աշխատանքների համար դրամաշնորհների տրամադրման մրցույթին:

Կից ներկայացնում եմ թեմայի հիմնավորումը:

Դիմող՝ ----------
ա.ա.հ. ստորագրություն

Համաձայնեցված է
Ավարտական աշխատանքի ղեկավար՝----------
----------ա.ա.հ. ստորագրություն

,,-----,,----------202 թ.

Հավելված 3

Հարցաշար՝ գիտատեխնիկական խորհրդի անդամի նշանակած գնահատականներով

Ոլորտ՝ նշելով ամբիոնը_____

(Թեմայի անվանումը)

(Մագիստրանտի ազգանունը, անունը, հայրանունը)

	Հարցաշարի բաղադրիչներ (յուրաքանչյուր բաղադրիչի համար՝ մինչև 5 միավոր)	Միավոր
1.	**Թեմայի հիմավորումը և արդիականությունը:** Որքանո՞վ է հիմնավորված թեմայի արդիականությունը	
2.	**Արդի վիճակի վերլուծություն:** Որքանո՞վ է համապարփակ վերլուծված ոլորտի արդի վիճակը	
3.	**Մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական թեմային	
4.	**Նպատակ և խնդիրներ.** Որքանո՞վ են հստակ ձևակերպված հետազոտության նպատակը և լուծվելիք խնդիրները	
5.	**Գիտական նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող թեման	
6.	**Արդյունքները և կիրառական նշանակությունը:** Որքանո՞վ են հստակ ձևակերպված հետազոտության արդյունքները և դրանց գործնական կիրառության հնարավոր ուղղությունները	
Ամփոփիչ միավոր (6 գնահատականների գումարը)		

Գիտատեխնիկական խորհրդի անդամ՝ ----------

(ա.ա.հ. ստորագրություն)

,,----,,.....202 թ

Հավելված N 4

202 -202 ուսումնական տարվա մրցույթին ներկայացված գիտահեն մագիստրոսական ավարտական աշխատանքների թեմաների գնահատման ամփոփիչ աղյուսակ

№	Մագիստրոսի ազգանուն, անուն, հայրանուն	Ավարտական աշխատանքի թեման	Գիտատեխնիկական խորհրդի անդամներ												Ընդամենը	Միջինը
			Բարսեղյան Սամվել	Թովմասյան Սարգիս	Սարուխանյան Արեստակ	Ազատյան Կարեն	Կիրակոսյան Լյուբա	Դադայան Տիգրան	Շահինյան Սամվել	Մելիքյան Արտաշես	Արզումանյան Ավետիք	Երզյան Տաթևիկ	Մանվելյան Զառա	Քարամյան Աննա		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1																
2																
3																
4																
5																
6																
7																
8																
9																
10																
11																
12																

Գիտատեխնիկական խորհրդի նախագահ՝ *Մ.Գ.Բարսեղյան*

,,_______,,_____________ 202 թ.

Հավելված N 5

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի
Գիտատեխնիկական խորհրդի
Գիտահեն մագիստրոսական ավարտական աշխատանքների թեմաների 202 -202 ուսումնական տարվա մրցույթի արդյունքների մասին

Գիտատեխնիկական խորհուրդը, հաշվի առնելով մրցույթին ներկայացված թեմաների գնահատման արդյունքները, որոշում է հաղթող ճանաչել հետևյալ թեմաները.

	Ամբիոն	Մագիստրանտ	Ավարտական աշխատանքի թեմա	Ղեկավար
1				
2				
3				
4				
5				

Գիտատեխնիկական խորհրդի նախագահ՝ Մ.Գ.Բարսեղյան

Գիտատեխնիկական խորհրդի անդամներ՝

Ստորագրութ. Ստորագրութ.

1 Թովմասյան Սարգիս

2 Սարուխանյան Արեստակ

3 Ազատյան Կարեն

4 Դադայան Տիգրան

5 Կիրակոսյան Լյուբա

6 Շահինյան Սամվել

7 Արզումանյան Ավետիք

8 Մելիքյան Արտաշես

9 Եդոյան Տաթևիկ

10 Մանվելյան Զարա

11 Քարամյան Աննա

Հավելված 6

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 202 թ.

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան, նաև՝Պատվիրատու), ի դեմս ռեկտոր Մանուկ Գևորգի Բարսեղյանի, որը գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և Համալսարանի ---------- ֆակուլտետի ----------ամբիոնի մագիստրանտ---------- ավարտական աշխատանքի ղեկավար---------- (այսուհետ՝ Կատարող)՝ մյուս կողմից (այսուհետ նաև՝ Կողմեր), հիմք ընդունելով Համալսարանի Գիտատեխնիկական խորհրդի ---------- նիստի No_____ արձանագրությունը՝ գիտահետազոտական մագիստրոսական ավարտական աշխատանքների համար դրամաշնորհների տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված թեմաների վերաբերյալ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին հանձնարարում է մագիստրանտ---------- ի ավարտական աշխատանքի կատարման ընթացքում, ղեկավարի պարտականություններին զուգահեռ իրականացնելու հետևյալ աշխատանքները.

1.1.1. Մագիստրանտ ---------- հետ Համալսարանի անունից կնքել գիտահետազոտական աշխատանքների կատարման պայմանագիր,

1.1.2. Ավարտական աշխատանքի կատարման ժամանակ ապահովել գիտահետազոտական բաղադրիչի պատշաճ մակարդակով մշակումը,

1.1.3. Միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումից հետո ամբիոնի վարիչին ներկայացնել գրավոր հաղորդում կատարված աշխատանքների մասին,

1.1.4. Մինչև ամփոփիչ ատեստավորումը ապահովել ավարտական աշխատանքի թեմայով գիտական հոդվածի հրապարակումը կամ հրապարակման ներկայացումը՝ մագիստրանտի հետ համահեղինակությամբ:

1.2. Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են 202 թ -ից:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1.Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած պահի ստուգել Կատարողին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքն ու վիճակը,

2.1.2. Օգտագործել Կատարողի կողմից իրեն հանձնված աշխատանքի իրավական պահպանության ենթակա արդյունքները,

2.1.3. Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմանգրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.2.Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1.Կատարողին տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ և պայմաններ սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար,

2.2.2.Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմանգրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.3.Կատարողն իրավունք ունի՝

2.3.1.Պահանջել Պայմանագրի 3.1. կետով նախատեսված վճարը՝ սահմանված կարգով և ժամկետում.

2.3.2.Պայմանագրի իրականացման շրջանակներում օգտվել Համալսարանի գրադարանի տեղեկատվական պահոցներից և լաբորատոր սարքավորումներից.

2.4.Կատարողը պարտավոր է՝

2.4.1.Ապահովել սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքների կատարումը,

2.4.2.Միջոցներ ձեռնարկել՝ ավարտական աշխատանքը սահմանված ժամկետներում և պատշաճ մակարդակով միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումներին ներկայացնելու համար,

2.4.3. Պատվիրատուին ժամանակին տեղեկացնել աշխատանքում նախատեսված արդյունքների ստացման անհնարինության կամ աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին,

2.4.4. Աշխատանքի կատարման համար իրեն ժամանակավոր տրամադրված գույքը, միջոցներն ու այլ արժեքներն օգտագործել խնամքով, հարկ եղած դեպքում՝ Պատվիրատուի պահանջով վերադարձնել, իսկ դրանք վնասելու պարագայում՝ կրել նյութական պատասխանատվություն և հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.5. Սույն պայմանագրի շրջանակներում իրականացված գիտական հետազոտություններն առանց Պատվիրատուի համաձայնության չփոխանցել երրորդ անձանց:

2.5. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է աշխատանքները կատարելիս ստացված գաղտնի ճանաչված տեղեկությունները հրապարակել միայն մյուս կողմի համաձայնությամբ:

2.6. Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնարարված աշխատանքների կատարման պայմանների խախտման համար:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որը հաշվարկվում և վճարվում է Կատարողին հետևյալ պարբերականությամբ՝

3.1.1. Սույն պայմանագիրրն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում նախավճար՝ գումարի 20 տոկոսի չափով,

3.1.2. Ավարտական աշխատանքի միջանկյալ ատեստավորման արդյունքներն անփոփելուց հետո մեկամսյա ժամկետում՝ գումարի 40 տոկոսի չափով,

3.1.3. Ամփոփիչ ատեստավորումից հետո մեկամսյա ժամկետում՝ գումարի 40 տոկոսի չափով:

3.2. Պայմանագրի գինը ներառում է հարկերն ու այլ պարտադիր վճարները:

3.3. Պատվիրատուի կողմից պայմանագրի գինը վճարվում է Կատարողին ՀՀ արժույթով, անկանխիկ՝ փոխանցելով Կատարողի կողմից ներկայացված բանկային հաշվի համարին:

4. Պայմանագրով սահմանվող ժամկետները և վեճերի լուծման կարգը

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ----------ից և գործում է մինչև ավարտական աշխատանքների ամփոփիչ ատեստավորման ավարտի օրը:

4.2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և/կամ լրացում կատարվում է գրավոր համաձայնագրերով, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

4.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, սույն Պայմանագրի կատարման ընթացքում ծագած տարաձայնություններն և վեճերը ենթակա են լուծման բանակցությունների միջոցով, անհամաձայնության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4. Պայմանագիրը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Բոլոր այն հարցերը, որոնք չեն ներառվել սույն Պայմանագրում, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Սույն Պայմանագրով սահմանված պարտավորություններն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով (ֆորս-մաժոր) ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից:

6. Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամ	_____
հասցե՝ Երևան, Տերյան 105, ՀՎՀՀ 01506385	անուն, հայրանուն, ազգանուն
Հեռախոս - (010) 54-74-25	Անձնագիր_____
Ռեկտոր՝ Մ.Գ.Բարսեղյան	Հաշվառված_____
	Սոց.քարտ_____
	Հեռ. _____
_____	(բջջային) _____
ստորագրություն	ստորագրություն

Հավելված 7

«Հաստատում եմ»
Ֆիզ. մաթ.գ. դոկտոր Մ.Գ.Բարսեղյան
ՃՇՀԱՀ Ռեկտոր

_____

_____202 -թ.

«Համաձայնեցված է»
Ճարտ.դոկ., դոց.Ս.Ա.Թովմասյան
ԳԱԳ պրոռեկտորի պ.կ.

_____202-թ.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան _____202 թ.

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս ---------- ամբիոնի դասախոս---------- ----------(այսուհետ՝Պատվիրատու), որը միաժամանակ հանդես է գալիս որպես մագիստրոսական ավարտական աշխատանքի ղեկավար՝ մի կողմից, և նույն ամբիոնի մագիստրանտ_____(այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, (այսուհետ՝ նաև Կողմեր), հիմք ընդունելով Համալսարանի գիտատեխնիկական խորհրդի ---------- նիստի No_____ արձանագրությունը՝ գիտահեն մագիստրոսական ավարտական աշխատանքների համար դրամաշնորհների տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված թեմաների վերաբերյալ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն Համալսարանի անունից Կատարող ---------- ---------- ին հանձնարարում է ---------- ---------- թեմայով մագիստրոսական ավարտական աշխատանքի կատարման շրջանակում որպես կրտսեր գիտաշխատող իրականացնել ավարտական աշխատանքի թեմային առնչվող գիտական հետազոտություն:

1.2. Կատարողը սույն Պայմանագրի սահմաններում հաշվետու է Պատվիրատուին:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած պահի ստուգել Կատարողին հանձնարարված աշխատանքների իրականացման ընթացքն ու վիճակը,

2.1.2. Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.4. կետում նշված պարտականությունները չկատարելու դեպքում հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումից՝ այդ մասին նախօրոք իրազեկելով կատարողին և գրավոր տեղեկացնելով ամբիոնի վարիչին,

2.1.3. Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմանգրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան Կատարողին պարբերաբար տրամադրել խորհրդատվություն և աջակցել նրան՝ սույն պայմանագրի 1.1. կետում նշված հետազոտական աշխատանքներն իրականացնելիս,

2.2.2. Կատարողի համար ապահովել սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան անվտանգ ու բարենպաստ պայմաններ և անհրաժեշտ տեղեկություններ տրամադրել աշխատանքների կատարման համար,

2.2.3. Ուսանողի հետ համահեղինակությամբ՝ մինչև ամփոփիչ ատեստավորումը հրապարակել կամ ներկայացնել հրապարակման մագիստրանտի ավարտական աշխատանքի թեմային առնչվող գիտական հոդված,

2.2.4. Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմանգրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.3. **Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Պահանջել Պայմանագրի 3.1. կետով նախատեսված վճարը՝ սահմանված կարգով և ժամկետներում,

2.3.2. Պայմանագրի իրականացման շրջանակներում օգտվել Համալսարանի գրադարանի տեղեկատվական պահոցներից և լաբորատոր սարքավորումներից,

2.3.3. Ցանկացած ժամանակ դիմել Պատվիրատուին՝ անհրաժեշտ խորհրդատվություն ստանալու համար,

2.3.4. Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմանգրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի 1.1. կետում նշված աշխատանքներն իրականացնելիս դրանց արդյունքները համաձայնեցնել Պատվիրատուի հետ և վերջնական արդյունքն ավարտական աշխատանքի ամփոփիչ ատեստավորումից առնվազն մեկ շաբաթ առաջ հանձնել Պատվիրատուին,

2.4.2. Պատվիրատուի հետ համահեղինակությամբ մինչև ամփափիչ առեստավորումը հրապարակել կամ ներկայացնել հրապարակման մագիստրանտի ավարտական աշխատանքի թեմային առնչվող գիտական հոդված,

2.4.3. Պատվիրատուի պահանջով վերացնել ավարտական աշխատանքում և (կամ) դրա հետազոտական մասում տեղ գտած թերությունները և նախագծման առաջադրանքից շեղումները,

2.4.4. Սույն պայմանագրի շրջանակներում իրականացված գիտական հետազոտություններն առանց Պատվիրատուի համաձայնության չփոխանցել երրորդ անձանց,

2.4.5. Աշխատանքի կատարման համար իրեն ժամանակավոր տրամադրված գույքը, միջոցներն ու այլ արժեքներն օգտագործել խնամքով, հարկ եղած դեպքում՝ Պատվիրատուի պահանջով վերադարձնել, իսկ դրանք վնասելու դեպքում՝ կրել նյութական պատասխանատվություն և հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4.6. Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմանգրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.5. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է աշխատանքները կատարելիս ստացված գաղտնիք ճանաչված տեղեկությունները հրապարակել միայն Համալսարանի և մյուս կողմի համաձայնությամբ:

2.6. Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնարարված աշխատանքների պայմանների խախտման համար:

3.Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որը հաշվարկվում և վճարվում է Կատարողին հետևյալ պարբերականությամբ.՝

3.1.1.Սույն պայմանագիրրն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում նախավճար՝ գումարի 20 տոկոսի չափով,

3.1.2. Ավարտական աշխատանքի միջանկյալ ատեստավորման արդյունքներն անփոփելուց հետո մեկամսյա ժամկետում՝ գումարի 40 տոկոսի չափով,

3.1.3.Ամփոփիչ ատեստավորումից հետո մեկամսյա ժամկետում՝ գումարի 40 տոկոսի չափով:

3.2.Պայմանագրի գինը ներառում է հարկերն ու այլ պարտադիր վճարները:

3.3.Պատվիրատուի կողմից պայմանագրի գինը վճարվում է Կատարողին ՀՀ արժույթով, անկանխիկ՝ փոխանցելով Կատարողի կողմից ներկայացված բանկային հաշվի համարին:

4. Պայմանագրով սահմանվող ժամկետները և վեճերի լուծման կարգը

4.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ----------ից և գործում է մինչև ավարտական աշխատանքների ամփոփիչ ատեստավորման ավարտի օրը:

4.2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և/կամ լրացում կատարվում է գրավոր համաձայնագրերով, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

4.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, սույն Պայմանագրի կատարման ընթացքում ծագած տարաձայնություններն և վեճերը ենթակա են լուծման բանակցությունների միջոցով, անհամաձայնության դեպքում ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4. Պայմանագիրը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Բոլոր այն հարցերը, որոնք չեն ներառվել սույն Պայմանագրում, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Սույն Պայմանագրով սահմանված պարտավորություններն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով (ֆորս-մաժոր) ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից:

5.3. Պայմանագրի շրջանակներում ձեռք բերված արդյունքների նկատմամբ կողմերն ունեն հավասար հեղինակային իրավունքներ:

5.4. Սույն Պայմանագիրը կազմված է երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5.5. Սույն Պայմանագիրը ստորագրելիս Կատարողը ծանոթացել է Պայմանագրի պայմաններին և Համալսարանի ներքին կարգապահական կանոններին:

7. Կողմերի հասցեները և ստորագրությունները

ԳՈՐԾԱՏՈՒ	ԱՇԽԱՏՈՂ
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամ հասցե՝ ք. Երևան, Տերյան 105 իրավաբանական անձի պետ. գրանցման վկայական՝ թիվ 222.160.811876, տրված՝ 29.04.2014թ., ՀՎՀՀ 01506385 Թեմայի ղեկավար՝ _____ անուն, հայրանուն, ազգանուն Անձնագիր_____ Հաշվառված_____ _____ ստորագրություն	_____ անուն, հայրանուն, ազգանուն Անձնագիր_____ Հաշվառված_____ Սոց.քարտ_____ Հեռ. _____ (բջջային) _____ _____ ստորագրություն